



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

N 41 - Ա

11 դեկտեմբերի 2013 թ

Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ս Տ Ե Ղ Ծ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.15-րդ և 1.6-րդ կետերի պահանջներով

Կարգադրում եմ՝

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի 01/15/6657-13 հանձնարարականի և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ծրագրի 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

- | | |
|-----------------|--|
| Հովհաննիսյան Վ. | - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ , հանձնաժողովի նախագահ |
| Բադալյան Հ. | - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Գեղարքունիքի մարզային գործակալության տնօրեն /համաձայնությամբ/ |
| Հակոբյան Ժ. | - << Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի կենտրոն>> ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/ |
| Մելքոնյան Ս. | - ՀՀ գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/ |
- Հանձնաժողովի կազմում ընդգրկել մարզի համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/

2. Մարզի տարածաշրջաններում անասունների համատարած հաշվառման կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ներքոհիշյալ մասնագետների վրա՝

- | | |
|-------------|--|
| Գրիգորյան Ա | - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ, Վարդենիսի տարածաշրջան |
|-------------|--|

- Բաղեյան Ռ. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, Մարտունու տարածաշրջան
- Խալաֆյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ, Սևանի և Ճամբարակի տարածաշրջաններ
- Զրաղացպանյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, Գավառի տարածաշրջան

3. Հանձնաժողովին՝ անասունների գլխաքանակի հաշվառման աշխատանքները մարզի տարածաշրջաններում կատարել 2014 թվականի հունվարի 1-17-ը:

4.Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Մ.Մանուկյանին:

5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ